ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԿՆՔՎԱԾ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ (ՍԱՄԱՂԱՐ) ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՆՎԱԾ ԱՌԱՆՁՆԱՏԱՆ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ 3-ՐԴ ՓՈՒԼԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ
N «ԱՍՀՆ-ՄԱԾՁԲ-24/30»
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **« » _____ 2024թ.**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «ՃարտՇին նախագիծ և դիզայն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, հիմք ընդունելով 2024 թվականի սեպտեմբերի 27-ին կնքված N «ԱՍՀՆ-ՄԱԾՁԲ-24/30» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5-րդ և 7.6-րդ կետերը և պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի 2024 թվականի դեկտեմբերի 27-ի զեկուցագիրը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. <u>ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ</u>

1.1 Ծառայության մատուցման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով՝ շինմոնտաժային աշխատանքների ավարտի հետ, համաձայնագրի կնքումից հետո մինչև 2025 թվականի հունվարի 24-ը ներառյալ:

2. <u>ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ</u>

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն համաձայնագրի դրույթներին:

3. <u>ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ</u>

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն համաձայնագիրը, համաձայնագրի հավելվածը կազմված են 1 էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարություն
ք. Երևան, կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011042356
ՀՎՀՀ՝ 01506515
Գլխավոր քարտուղար՝

_____ Ս. Մուրադյան
(ստորագրություն)
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ՃարտՇին նախագիծ և դիզայն» ՍՊԸ
ք.Երևան,Արզումանյան 8ա, 27 բն
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 22057333014300
ՀՎՀՀ՝ 01273917
«ՃարտՇին նախագիծ և դիզայն» ՍՊԸ-ի տնօրեն՝

---------- Հ. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Signed by: KHACHATRYAN HOVHANNES 360985053
Date: Mon, 30 Dec 2024 14:40:51 GMT+04:00

Digitally signed by MURADYAN SAMVEL 1104630109
Date: 2024.12.30 15:23:24 AMT